# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 24-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ, 62-րդ և 63-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-8, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է***.

Հաստատել Տաթև համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 17-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին

3. ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերից նվիրաբերության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Ջրային կոմիտեի, հողամաս հատկացնելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող «Բնակավայրերի» նպատակային նշանակության «Բնակելի կառուցապատման» գործառնական նշանակության 0.1071 հեկտար հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համար արտաբյուջետային հաշիվ բացելուն հավանություն տալու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու << Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 63-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N57-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

8. Հայաստանի Հանրապետութան Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստերի ժամանակացույցը սահմանելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 25-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ» ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ «ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ» ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1071 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, նույն հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման դրույթներով, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշման դրույթներով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է***՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ գյուղի 1-ին փողոց թիվ 120 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող <<Բնակավայրերի>> նպատակային նշանակության <<Բնակելի կառուցապատման>> գործառնական նշանակության 0.1071 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-047-0003-0013, վկայական N 03082023-09-0009) նախապատվության ուղղակի վաճառքով 360498(երեք հարյուր վաթսուն հազար չորս հարյուր իննսունութ) ՀՀ դրամ արժեքով օտարել ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանի Մուշ գյուղի նախկին բնակիչ, բռնի տեղահանված, գնմամբ նախապատվություն ունեցող Վարուժան Սերյոժայի Հայրապետյանին (անձ.AS0212910 , տրվ. 26.06.2018թ., 070-ի կողմից)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունելուց հետո հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ» ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ «ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ» ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1071 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, (օրենքներով գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց) նույն հոդվածի 2-րդ մասով, ( Հողամասերի ուղղակի վաճառքի գինը, սահմանվում է տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով)

Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով,

( Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը չի կարող պակաս լինել հողամասի կադաստրային արժեքի 100 տոկոսից, իսկ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, ծայրամասային բնակավայրերում աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ հողի կադաստրային արժեքի 50 տոկոսից,) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման դրույթներով և ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշման դրույթների պահանջները.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի Խոտ գյուղի 1-ին փողոց թիվ 120 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող <<Բնակավայրերի>> նպատակային նշանակության <<Բնակելի կառուցապատման>> գործառնական նշանակության 0.1071 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-047-0003-0013, վկայական N 03082023-09-0009) նախապատվության ուղղակի վաճառքով 360498 (երեք հարյուր վաթսուն հազար չորս հարյուր իննսունութ) ՀՀ դրամ արժեքով օտարել ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանի Մուշ գյուղի նախկին բնակիչ, բռնի տեղահանված, գնման նախապատվություն ունեցող Վարուժան Սերյոժայի Հայրապետյանին (անձ. AS0212910, տրվ. 26.06.2018թ., 070-ի կողմից)՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

**Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝** Լ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

**16 .08.2023թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 26-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի դրույթներով, որոշման նախագծի՝ կողմ -9, դեմ-0, ձեռնպահ -0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ղեկավարի հաղորդումը Տաթև համայնքի բյուջեի 2023 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հավելվածների:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**(ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ )**
**ՏԱԹև ՀԱՄԱՅՆՔԻ**
**2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

*Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումների որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը կատարելու համար: Տաթև համայնքի 2023 թվականի երկրորդ եռամսյակի վարչական բյուջեի եկամտային մասով պլանավորված 266956.833 հազար դրամի դիմաց (այդ թվում սեփական եկամուտ՝39366.0 հազար դրամ) փաստացի եկամուտը կազմել է 252656.366 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով կատարվել է 94.64 %-ով. այդ թվում սեփական եկամուտ՝ 21919.732 հազար ՀՀ դրամ,կամ 55.26%): (տես հատված 1):*

***Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը .***

*Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի գծով նախատեսված 12558.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 2874.739 հազար դրամ,եռամսյակի կտրվածքով տոկոսային արտահայտությամբ այն կատարվել է 22.89 %-ով:Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով նախատեսված 11310.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 9655.494 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով կատարվել է 85.37 %-ով, Տեղական տուրքերի գծով նախատեսված 858.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը եռամսյակի կտրվածքով կազմել է 351.2 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ կատարվել է 40.93%-ով:*

***Պաշտոնականդրամաշնորհներ՝***

*Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 100302.0 հազար դրամը հատկացվել է, այսինքն կատարողականը կազմել է 100%: Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ )մասով նախատեսված 79238.655 հազար ՀՀ դրամը ամբողջությամբ հատկացվել է, կամ կատարողականը կազմել է 100%: Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհների մասով նախատեսված 50890.179 հազար ՀՀ դրամը ամբողջությամբ հատկացվել է, , կամ կատարողականը կազմել է 100%:*

*Գույքի վարձակալությունից եկամուտների գծով նախատեսված 8160.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 4532.197 հազար դրամ, եռամսյակի կտրվածքով տոկոսային արտահայտությամբ կատարվել է 55.54%-ով, այդ թվում համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝պլանավորված 3348.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 939.792 հազար դրամ, կամ 28.07% ,հողամասերի կառուցապատման իրավունքի վարձավճարների մասով պլանավորված 1416.0 հազար ՀՀ դրամի դիմաց կատարողկնը կազմել է 892.405 հազար ՀՀ դրամ, կամ 63.02% այլ գույքի վարձակալությունից մուտքեր պլանավորված 3396.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 2700.0 հազար դրամ, կամ 79.51%: Տույժերից,տուգանքներից եկամուտների գծով նախատեսված 996.0 հազար դրամի*

դիմաց փաստացի եկամուտը կազմել է 228.138 դրամ, կամ կատարողականը կազմել է 22.91 %-: Վարչական գանձումներից ստացվող միջոցներից, (որը իր մեջ ներառում է աղբահանության վճարը,համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության ծնողական վճարները) նախատեսված 5484.0 հազար դրամի դիմաց փաստացի եկամուտը կազմել է 3182.6 հազար դրամ, տոկոսային արտահայտությամբ եռամսյակի կտրվածքով այն կատարվել է 58.03 %-ով:

***Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .***

*Հաշվետու ժամանակաշրջանում բյուջեի ծախսային մասով նախատեսած 140005.790 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը եռամսյակի կտրվածքով կազմել է 121512.035 հազար դրամ, այն կատարվել է 86.79 % -ով (տես հավված 2, 6 ):*

*Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում հատվածին պլանավորված 59203.970 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է կազմել է 55207.655 հազար դրամ, կամ 93.25 % :*

*Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին պլանավորված 5402.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է կազմել է 2480.295 հազար դրամ, կամ 45.91 % :*

*Տնտեսական հարաբերությունների գծով գյուղատնտեսություն ծրագրով պլանավորված 33500.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 29328.717 հազար դրամ, կամ 87.55 % :*

*Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար պլանավորված 2000.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 798.490 հազար ՀՀ դրամ, կամ 39.92 % :*

*Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 24000.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 21884.707 հազար դրամ, կամ 91.2 %, , իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար պլանավորված 10400.0 հազար դրամի դիմաց կատարողականը եռամսյակի կտրվածքով կազմել է 9032.071 հազար դրամ, կամ 86.85 %:*

*Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հաշվետու ժամանակաշրջանում հատկացվել է 1630.0 հազար դրամ:*

*Գլխավոր մասնագետ* *Արթուր Հովակիմյան*

14.08.2023 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 27-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով և հաշվի առնելով Տաթև համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, Տաթև համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**23 օգոստոսի 2023թ.** N ---Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածով և հաշվի առնելով Տաթև համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Տաթև համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, համաձայն հավելվածի:

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով:

**1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.**

Համայնքի ավագանու որոշմամբ կարգավորվում է, միջնաժամկետ կտրվածքով համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսման հետ կապված իրավահարաբերությունները:

**2. Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.**

Համայնքի ավագանու որոշման ընդունման նպատակը «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներով սահմանված պահանջների իրականացումն կատարելը և ապահովելն է:

*Գլխավոր մասնագետ* *Արթուր Հովակիմյան*

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի
Տաթև համայնքի ավագանու
2023 թվականի օգոստոսի
N -Ա որոշման

# ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումների առանձնահատկությունները

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում օրենսդրությամբ սահմանվել է համայնքում իրականացվող ռազմավարական ծրագրավորման երեք փուլ, որոնք տարբերվում են միմյանցից ինչպես դրանց ծրագրավորման ժամանակային հորիզոնով, այնպես էլ յուրաքանչյուր փուլում ծրագրավորվող տարրերի ագրեգացման մակարդակով: Այսպես, կախված ծրագրավորման ժամանակային հորիզոնից՝ նախատեսվում է հնգամյա ժամանակահատվածի (երկարաժամկետ), եռամյա ժամանակահատվածի (միջնաժամկետ) և մեկ տարվա ժամանակահատվածի (կարճաժամկետ) ծրագրերի մշակում: Երկարաժամկետ ծրագրերում ծրագրային տարրերը ներկայացվում են ագրեգացման առավել բարձր մակարդակով, քան միջնաժամկետ ծրագրերում, իսկ միջնաժամկետ ծրագրերում դրանց մակարդակն ավելի բարձր է, քան կարճաժամկետ ծրագրերում:
Վերը նշված ծրագրավորման երեք փուլերը փոխկապակցված են, և յուրաքանչյուր փուլում կազմված և սահմանված կարգով հաստատված ծրագիրը հիմք է հանդիսանում հաջորդ փուլում կազմվելիք ծրագրի համար: Մասնավորապես, երկարաժամկետ ծրագիրը հիմք է հանդիսանում միջնաժամկետ ծրագրի մշակման համար, իսկ միջնաժամկետ ծրագիրը իր հերթին հիմք է հանդիսանում կարճաժամկետ ծրագրի մշակման համար:

Համայնքի երկարաժամկետ ծրագիրը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրն է, միջնաժամկետ ծրագիրը՝ երեք տարվա համար կազմվող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է, իսկ կարճաժամկետ ծրագիրը՝ մեկ տարվա համար կազմվող համայնքի բյուջեն է: Եթե համայնքի զարգացման ծրագիրը հաստատվում է մեկ անգամ ավագանու լիազորությունների ամբողջ ժամանակահատվածի՝ 5 տարվա համար (անհրաժեշտության դեպքում կարող են լինել փոփոխություններ), ապա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը մշակվում և հաստատվում է յուրաքանչյուր տարի՝ առաջիկա 3 տարվա համար:
Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Այսինքն՝ համայնքի տարեկան բյուջեի նախագծի կազմման գործընթացն առաջնորդվելու է արդեն իսկ կազմված համայնքի ՄԺԾԾ-ով՝ առաջիկա տարվա համար հաստատված հաշվարկներով և հիմնավորումներով: Եվ հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ համայնքի ՄԺԾԾ

նախագծի մշակումը նույնպես, ինչպես և տարեկան բյուջեի նախագծի մշակումը, համայնքի բյուջետային գործընթացի լիիրավ փուլ է համարվում:

Համայնքի եռամյա միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման փուլի ներմուծմամբ համայնքի համար հնարավորություն է ընձեռնվում անցնել եռամյա ֆինանսական ծրագրավորմանը և տեսնել համայնքի բյուջեի մշակման փուլին բնորոշ մեկ տարվա տեսադաշտից ավելի հեռու՝ երեք տարվա հորիզոնով:

Այդ ժամանակահատվածում համայնքի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության, ինչպես նաև այլ գործոնների ազդեցության կանխատեսումները հնարավորություն կընձեռնեն համայնքին մի կողմից՝ մեծացնել համայնքի ֆինանսական ծրագրերի կանխատեսելիությունը, ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմների հստակեցումը, իսկ մյուս կողմից՝ բարձրացնել համայնքներում բյուջետային կարգապահությունը և հաշվետվողականությունը: Առաջիկա երեք տարվա՝ տեղական ինքնակառավարման մարմինների ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքների համար կառավարելու ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան:

## Տաթև համայնքի բյուջեի ՄԺԾԾ ոլորտային գերակայությունները

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքի զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեով:Հիմք ընդունելով ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունները և հաշվի առնելով համայնքի խնդիրները, համայնքը իր առջև դրել է հետևյալ գերակայությունները՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:
- Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:
- Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում՝ համադրելով ֆինանսական ծրագրերի (հանրային հատվածի հաշվապահություն, ՀՀ ՖՆ գանձապետարանի ծրագիր) և ամփոփ հաշվեկշիռների հրապարակայնություն ՀԿՏՀ-ում:
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Աջակցություն ցուցաբերել և իրականացնել միջոցառումներ համայնքի բնակչության՝ խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամներին ֆինանսական կամ նյութական օգնություն տրամադրելու գործում:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման, ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը, առկա լուսավորության համակարգը փոխարինելով էներգախնայող լուսատուներով:
- Խթանել համայնքում գենդերային, հաշմանդամության և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացումը:

- Իրականացնել օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

Համայնքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը: Համայնքը կարևորում է համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները:

Համայնքային կառավարման ոլորտում իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացումը:

Տնտեսության ոլորտում շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղա-տնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում):

Բնապահպանության բնագավառում կարևորվում են աղբահանության և սանիտարական մաքրման, այդ թվում՝ անօրինական աղբանոցների վերացման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների ու ենթածրագրերի, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը և լուսավորությունը:

Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:

Քաղաքաշինության բնագավառի հիմնական ուղղություններն ու ծախսային գերակա-յություններն են՝ համայնքների բարեկարգման, բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի ամրացման կամ նոր շենքերի կառուցման, անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, համայնքում ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս առաջնորդվել ենք ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի «ՀՀ բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2008 թվականի օգոստոսի 15-ի «ՀՀ համայնքի բյուջեի օրինակելի ձևը և նշված ձևի առանձին հատվածների լրացման մասին ցուցումները հաստատելու, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2004 թվականի մարտի 5-ի N 194-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 730 հրամանով: Ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ հաշվարկել ենք «Դաս-Կատեգորիա-

խումբ» սինթետիկ մակարդակով: Ծախսերի նախագծում համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրության չափերը որոշելիս համայնքի ղեկավարը ղեկավարվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 28-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով:Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնման) հոդվածներով ծախսերի նախատեսման դեպքում այդ ծախսերի հաշվարկներում ապրանքների և ծառայությունների գները հաշվարկելիս առաջնորդվել ենք հետևյալ մոտեցմամբ՝

- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա են նախորդ տարիներից շարունակվող (գործող) պայմանագրեր, որոնք տարածվում են ընթացիկ տարվա վրա, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ հոդվածի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գները սահմանվում են համապատասխան կարգավորող մարմինների կողմից, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով սահմանված սակագներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա չեն ընթացիկ տարվա վրա տարածվող պայմանագրեր, սակայն առկա են համապատասխան (գործող) պայմանագրեր նախորդ տարվա համար, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով նախորդ տարվա համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար չկան գործող պայմանագրեր, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծախսի գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գործող պայմանագրերի, սահմանված սակագների և ընթացիկ տարվան նախորդող տարվա համապատասխան փաստացի գների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է՝ ելնելով վերջինիս վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության կամ այլ աղբյուրների հրապարակումներում առկա տեղեկատվությունից:

**Համայնքների եկամուտները՝**

2023-2025 թվականների Տաթև համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագրում առաջիկա երեք տարիների համար համայնքի եկամուտները պլանավորելիս հիմք է հանդիսացել օրենքով սահմանված և նախորդ երեք տարիներին հավաքագրված միջին ցուցանիշները:

Հարկերը հաշվարկելիս հիմք է հանդիսացել համայնքում պարտադիր կիրառվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարները ենթակա են վճարման համայնքի բյուջեն: Անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցների գույքահարկ վճարողների, դրանց առանձին խմբերի, ինչպես նաև հարկման որոշ օբյեկտների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են հարկային արտոնություններ:

* Անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի արտոնությունների սահմանման իրավասությամբ օժտված է նաև համայնքի ավագանին, որի սահմանած արտոնությունների

ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ հարկային տարվա համար անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը և փոխադրամիջոցների գույքահարկի համար համայնքի բյուջեի հաստատված եկամուտների 10 տոկոսը, և այդ արտոնությունների գումարի դիմաց պետական բյուջեից լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում: Միևնույն ժամանակ համայնքների բյուջեների նախագծերում տեղական հարկերի մուտքերի կանխատեսման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել յուրաքանչյուր հարկատեսակի համար հաշվարկային գումարները, գնահատել պլանավորվող տարվա սկզբի դրությամբ կուտակվելիք ապառքների փոփոխության (մարման և/կամ նոր ապառքների առաջացման) դինամիկան և հարկային օրենսդրության հնարավոր խախտումների համար հաշվարկվելիք տույժերի և տուգանքների գծով համայնքի բյուջե գանձվելիք գումարների ծավալները (այսինքն՝ գնահատել նշված հարկատեսակների գծով համայնքի բյուջեի եկամուտների պոտենցիալ մակարդակը): Մասնավորապես, ապառքների մարման կամ նոր ապառքների առաջացման վերաբերյալ ենթադրությունները, որոնք կդրվեն այս հարկատեսակների գծով համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումների հիմքում, արտացոլվում է համայնքի բյուջեի (նրա բաղկացուցիչ մասերի) միասնական օրինակելի ձևի հատված 1-ի Տեղեկություններ գույքահարկի և հողի հարկի, հողերի և այլ գույքի վարձակալության վարձավճարների գծով առանձին ցուցանիշների վերաբերյալ՝ աղյուսակի 1-3 տողերում:

Իրատեսական կանխատեսումների համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև նախորդ տարիներին այդ հարկերի գանձելիության մակարդակը, ինչպես նաև այս բնագավառում առկա խնդիրների առաջացման պատճառները ու դրանք հաղթահարելու հնարավորությունները: Անշարժ գույքի հարկի կանխատեսումներում անհրաժեշտ է հաշվի առնել, որ անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով գնահատված՝ հողամասերի և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները: Բացի այդ, նույն հարկային օրենսգրքով սահմանվել է, որ 2021 թվականի, հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և ՀՀ հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Փոխադրամիջոցների գույքահարկի կանխատեսումներում հաշվի ենք առել փոխադրամիջոցների գույքահարկով հարկման օբյեկտները՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող), մոտոցիկլետը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը):

**Տեղական տուրքեր և վճարներ՝**

Տեղական տուրքերի գծով համայնքի բյուջեի եկամուտների հաշվարկման համար կարևոր է բազայի գնահատումը, քանի որ տեղական տուրքերը և դրանց դրույքաչափերը սահմանվում են համայնքի տարեկան բյուջեի հաստատումից առաջ: Դրույքաչափերի հաստատումից հետո տեղական տուրքերի կանխատեսումը կհանգի միայն տարվա ընթացքում տվյալ տեղական տուրքի քանակի (բազայի) կանխատեսմանը: Նույն մոտեցմամբ իրականացվում է նաև տեղական

վճարներից համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսումը: Բերդ համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելիս ավագանին առաջնորդվել է գոտիավորման սկզբունքով, գոտի համարելով համայնքի կազմում առկա յուրաքանչյուր բնակավայրը:

**Այլ եկամուտներ՝**

Տաթև համայնքի այլ եկամուտներն են համայնքի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերի համապատասխան գանձվող վճարները՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, որոնց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հիմք ընդունել նախորդ տարիների համար կնքված պայմանագրերի ցուցանիշները: Վարձակալության հանձնվող հողերի վարձակալական վճարները չպետք է պակաս լինեն այդ հողերի համար հաշվարկվող անշարժ գույքի հարկի մեծությունից, իսկ այս եկամտատեսակի գծով կանխատեսվող գումարները պետք է ներառեն նաև առ 01.01.13թ. առկա ապառքների մարումից մուտքերը: Այլ եկամուտ է նաև վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները:

**Պաշտոնական դրամաշնորհներ՝**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին համապատասխան համայնքների բյուջեների վարչական մասի եկամուտների կազմում կարող են նախատեսվել պետական բյուջեից ստացվող պաշտոնական դրամաշնորհները: Դրանցից մի տեսակի՝ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարները կհաշվարկվեն լիազորված պետական մարմնի կողմից՝ «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան:

Համայնքի բյուջեի նախագիծ կազմելիս՝ հիմքում դրվում է համայնքի ՄԺԾԾ-ն՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:

Առաջիկա երեք տարվա՝ համայնքի ՄԺԾԾ մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները:

*Գլխավոր մասնագետ* *Արթուր Հովակիմյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 28-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, համաձայն Տաթև համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 56-Ա որոշմամբ սահմանված N 1-հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Սյունիքի
մարզի Տաթև համայնքի ավագանու 2023 թ-ի օգոստոսի 26-ի թիվ 28 -Ա որոշման

## <<ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ>> ՀՈԱԿ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 24

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | Պաշտոնային դրույքաչափը | Ամսական աշխատավարձ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Տնօրեն | 1 | 1 | 280 000 | 280 000 |
| 2 | Աշխատանքների համակարգող | 1 | 1 | 210 000 | 210 000 |
| 3 | Գնումների մասնագետ-հաշվապահ | 1 | 1 | 165 000 | 165 000 |
| 4 | Եկամուտների հավաքագրման և պայմանագրերի կնքման պատասխանատու | 1 | 1 | 140 000 | 140 000 |
| 5 | Վարորդ/Աղբատարի/ | 1 | 1 | 200 000 | 200 000 |
| 6 | Օժանդակ բանվոր/Շինուհայր գյուղում/աղբահանություն/ | 1 | 1 | 165 000 | 165 000 |
| 7 | Օժանդակ բանվոր/Շինուհայր գյուղում/աղբահանություն/ | 1 | 1 | 165 000 | 165 000 |
| 8 | Օժանդակ բանվոր/Շինուհայր գյուղում/աղբահանություն/ | 1 | 1 | 160 000 | 160 000 |
| 9 | Օժանդակ բանվոր/Շինուհայր գյուղում/ | 1 | 1 | 95 625 | 95 625 |
| 10 | Օժանդակ բանվոր/Շինուհայր գյուղում/ | 1 | 1 | 95 625 | 95 625 |
| 11 | Օժանդակ բանվոր/Տաթև գյուղում/ | 1 | 1 | 143 438 | 143 438 |
| 12 | Օժանդակ բանվոր/Սվարանց գյուղում/ | 1 | 0,5 | 95 625 | 47 813 |
| 13 | Օժանդակ բանվոր/Խոտ գյուղում/ | 1 | 1 | 95 625 | 95 625 |
| 14 | Օժանդակ բանվոր/Հարժիս գյուղում/ | 1 | 1 | 104 000 | 104 000 |
| 15 | Օժանդակ բանվոր/Հալիձոր գյուղում/ | 1 | 1 | 104 000 | 104 000 |
| 16 | Վարորդ/Ինքնաթափի/ | 1 | 1 | 107 206 | 107 206 |
| 17 | Վարորդ/Էքսկավատոր/ | 1 | 1 | 270 000 | 270 000 |
| 18 | Վարորդ/Ավտոգրեյդել/ | 1 | 1 | 104 000 | 104 000 |
| 19 | Պահակ/Տեխնիկայի կայանատեղի համար/ | 1 | 1 | 104 000 | 104 000 |
| 20 | Պահակ/Տեխնիկայի կայանատեղի համար/ | 1 | 1 | 95 625 | 95 625 |
| 21 | Պահակ/Տեխնիկայի կայանատեղի համար/ | 1 | 1 | 95 625 | 95 625 |
| 22 | Էլեկտրիկ | 1 | 1 | 104 000 | 104 000 |
| 23 | Եռակցող-տեխնիկ | 1 | 1 | 135 000 | 135 000 |
| 24 | Կոմբայնավար | 3 | 3 | 200 000 | 600 000 |
|  | Ընդամենը | 26 |  |  | 3 786 582 |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 29-Ա

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ, ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 65-րդ հոդվածի 6–րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի» տնօրենի 2022թվականի ապրիլի 18–ի N562 գրությունը և Տաթև համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-9 , դեմ-0, ձեռնպահ-0 քվեարկության արդյունքներով, ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր գյուղի 6-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի 0,2հա հողամասը /նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների, կադաստրային ծածկագիր՝ 09-073-0115-0004, վկայականի N 23032023-09-0025/ նվիրաբերության կարգով «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղին» հատկացնելուն:
2. Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել վերը նշված գույքը նվիրաբերությամբ հատկացնելու համապատասխան ընթացակարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր գյուղի 6-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 47 հասցեի 0,2հա հողամասը /նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների, կադաստրային ծածկագիր՝ 09-073-0115-0004, վկայականի N 23032023-09-0025/ նվիրատվության կարգով «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղին» հատկացնելու համար հիմք է հանդիսանում «ՀԵԾ-II Փուլ 3» ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրում ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով նոր օրվա կարգավորման ջրամբարի (ՕԿՋ) կառուցման անհրաժեշտությունը:

Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Լ.Մանուչարյան

05.06.2023թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 30-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետով, 92-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի, հաշվի առնելով «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային ծրագիրը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում համայնքում՝ հատուկ ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ գանձապետական համակարգում ՀՀ դրամի արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Տաթև համայնքում՝ հատուկ ծրագրերի իրականացման նպատակով անհրաժեշտ է ՀՀ գանձապետական համակարգում բացել արտաբյուջետային հաշիվ:

Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Ա. Հովակիմյան

## ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն որոշման նախագծի ընդունմամբ ծախսային մասը ծախսային մասը կնվազի ներդրման չափով:

Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Ա. Հովակիմյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 31-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 63-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.2 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 11.1 կետով, համաձայն համայնքի ղեկավարի առաջարկության, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-9 , դեմ-0 , ձեռնպահ-0,ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու << Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 63-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N57-Ա որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ

ՄԱՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՆԱՌԱ ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ

ԵԳՈՐ ՓԱՐՍՅԱՆ

ԱՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՂՈՒՆՑ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

կիրագործվեն համայնքի ղեկավարի և ավագանու պարտադիր և հայեցողական լիազորությունները՝ ի շահ համայնքի և բնակավայրի զարգացման:

## ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում անհրաժեշտ է համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել փոփոխություն՝ կրճատել Քաշունի բնակավայրի համար նախատեսված գրադարանավարի մեկ հաստիքը:

**ԿԱԶՄԵՑ՝** **Հ. ԱՐՍԵՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

Որոշման նախագծի ընդունման արդյունքում համայնքի բյուջեում փոփոխություններ չեն նախատեսվում:

**ԿԱԶՄԵՑ՝** **Հ. ԱՐՍԵՆՅԱՆ**

# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Տաթև համայնքի Քաշունի բնակավայրը նախորդ 30 տարիների ընթացքում բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրողությունների արդյունքում դարձել է մասամբ լքված բնակավայր, որտեղ նախկինում կառուցված բնակելի տներից մշտապես բնակեցված է միայն 2-ը, 4-ը ենթակա չէ բնակեցման՝ առանձնատների վթարային վիճակի հետևանքով, 16-ը բնակեցվում է մասամբ միայն ուշ գարնան, ամռան և վաղ աշնան շրջանում: Բնակավայրը ապահովված չէ բնակչության սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով՝ մասնավորապես բացակայում է դպրոցը, մշակույթի տունը և այլն:

Բնակավայրի վարչական տարածքով ՀՀ միջպետական Մ-2 ճանապարհի գործարկմամբ և ճանապարհի բարվոք վիճակով պայմանավորված, նաև հաշվի առնելով բնակավայրի տեղադիրքը, լանդշաֆտը և հիմնականում անտառապատ հարուստ բնաշխարհը, վերջին ժամանակահատվածում արձանագրվել է բնակավայրի նկատմամբ վերաբերմունքի կտրուկ փոփոխություն՝ նախկին բնակիչների, ինչպես նաև ներքին, արտաքին տնտեսվարողների և դրամաշնորհային կազմակերպությունների կողմից ներկայացված տնտեսական (հատկապես տուրիզմի) և սոցիալական ուղղվածության բազմաթիվ ծրագրերի առաջարկներով :

Բնակավայրի վերածննդի համար ստեղծված աննախադեպ իրավիճակը բնակավայրի հետագա իրական զարգացման գործին, բնակչության վերաբնակեցմանը ծառայեցնելու հրամայականով պայմանավորված, անմիջապես տեղում անհրաժեշտ կազմակերպչական, ներկայացուցչական և համայնքապետարանի առջև ծառացած այլ խնդիրների օպերատիվ լուծման նպատակով անհրաժեշտություն է առաջացել համապատասխան իրավակարգավորումներով՝ Տաթևի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում առաջարկվող փոփոխությամբ, ստեղծել Քաշունի բնակավայրի վարչական ղեկավարի հաստիք՝ Քաշունի բնակավայրում գոյություն ունեցող համայնքային վարչական մարմնի միակ հաստիքի՝ գրադարանավարի փոխարեն: Նշենք նաև, որ Տաթև համայնքի ութ բնակավայրերից Քաշունին միակ բնակավայրն է, որտեղ տևական ժամանակ չի ունեցել վարչական ղեկավար: Բնակավայրի վարչական ղեկավարի լիազորությունները վերապահվել են Սվարանց բնակավայրի վարչական ղեկավարին: Նման իրավակարգավորումով Քաշունի բնակավայրում համայնքի ղեկավարի լիազոր ներկայացուցչի ինստիտուտը չի ապահովվել և չի ապահովվում առկա տենդենցներին համահունչ արդյունավետություն:

Որոշման նախագծի ընդունման արդյունքում կունենանք մի այնպիսի իրավիճակ, որ Տաթև համայնքի կենտրոնից՝ Շինուհայր բնակավայրից, 29 կմ հեռավորության վրա գտնվող Քաշունի բնակավայրում նոր ստեղծվող վարչական ղեկավարի անձի պաշտոնական կարգավիճակով պայմանավորված լիարժեքորեն

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի
Տաթև համայնքի ավագանու
2023 թ. օգոստոսի 23-ի N 31-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 45:

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) | ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 1 | 425000 | | 425000 |
| 2. | Համայնքի ղեկավարի առաջին փեղակալ | 1 | 1 | 346000 | | 346000 |
| 3. | Համայնքի ղեկավարի փեղակալ | 1 | 1 | 326000 | | 326000 |
| 4. | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 1 | 260000 | | 260000 |
| 5. | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 1 | 220000 | | 220000 |
| 6 | Համայնքի ղեկավարի առաջին փեղակալի օգնական | 1 | 1 | 210000 | | 210000 |
| 7 | Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար | 1 | 1 | 140000 | | 140000 |
| | Ընդամենը | 7 | 7 | | | 1927000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | |
| 8 | Վարչական ղեկավար Տաթև բնակավայրում | 1 | 1 | 185000 | | 185000 |
| 9 | Վարչական ղեկավար Խոտ բնակավայրում | 1 | 1 | 185000 | | 185000 |
| 10 | Վարչական ղեկավար Հարժիս բնակավայրում | 1 | 1 | 185000 | | 185000 |
| 11 | Վարչական ղեկավար Հալիձոր բնակավայրում | 1 | 1 | 185000 | | 185000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 12 | Վարչական ղեկավար Սվարանց բնակավայրում | 1 | 1 | 150000 | | 150000 |
| 13 | Վարչական ղեկավար Տանձատափ բնակավայրում | 1 | 1 | 150000 | | 150000 |
| 14 | Վարչական ղեկավար Քաշունի բնակավայրում | 1 | 1 | 100000 | | 100000 |
| | Ընդամենը | 7 | 7 | | | 1140000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | | | |
| 15 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 | 336000 | | 336000 |
| 16 | Գլխավոր մասնագետ | 1 | 1 | 235000 | 23500 | 258500 |
| 17 | Գլխավոր մասնագետ | 1 | 1 | 235000 | | 235000 |
| 18 | Գլխավոր մասնագետ | 1 | 1 | 235000 | | 235000 |
| 19 | Առաջատար մասնագետ | 1 | 1 | 165000 | 16500 | 181500 |
| 20 | Առաջատար մասնագետ | 1 | 1 | 165000 | | 165000 |
| 21 | Առաջատար մասնագետ | 1 | 1 | 165000 | | 165000 |
| 22 | Առաջատար մասնագետ | 1 | 1 | 165000 | | 165000 |
| 23 | Առաջատար մասնագետ | 1 | 1 | 165000 | | 165000 |
| 24 | Առաջատար մասնագետ | 1 | 1 | 165000 | | 165000 |
| 25 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 140000 | 14000 | 154000 |
| 26 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 140000 | | 140000 |
| 27 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 140000 | | 140000 |
| 28 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 140000 | 14000 | 154000 |
| 29 | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 125000 | | 125000 |
| 30 | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 125000 | | 125000 |
| | Ընդամենը | 16 | 16 | | 68000 | 2909000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | | | |
| 31 | Տնտեսվար | 1 | 1 | 185000 | | 185000 |
| 32 | Վարորդ | 1 | 1 | 140000 | | 140000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 33 | Վարորդ | 1 | 1 | 131000 | | 131000 |
| 34 | Հավաքարար(Տաթևի համայնքապետարանում) | 1 | 1 | 120000 | | 120000 |
| 35 | Ակումբավար(Խոտ բնակավայրում) | 1 | 1 | 105000 | | 105000 |
| 36 | Ակումբավար-գրադարանավար(Տանձատափ բնակավայրում) | 1 | 0.5 | 168000 | | 84000 |
| 37 | Ակումբավար(Տաթև բնակավայրում) | 1 | 0.5 | 130000 | | 65000 |
| 38 | Ակումբավար(Հարժիս բնակավայրում) | 1 | 0.5 | 130000 | | 65000 |
| 39 | Ակումբավար(Հալիձոր բնակավայրում) | 1 | 0.5 | 130000 | | 65000 |
| 40 | Ակումբավար(Սվարանց բնակավայրում) | 1 | 0.5 | 130000 | | 65000 |
| 41 | Հավաքարար(Հալիձոր բնակավայրում) | 1 | 0.5 | 186000 | | 93000 |
| 42 | Հավաքարար(Տաթև բնակավայրում) | 1 | 0.5 | 120000 | | 60000 |
| 43 | Հավաքարար(Խոտ բնակավայրում) | 1 | 0.5 | 120000 | | 60000 |
| 44 | Հավաքարար(Հարժիս բնակավայրում) | 1 | 0.5 | 120000 | | 60000 |
| 45 | Հավաքարար(Հարժիս բնակավայրում | 1 | 0.5 | 120000 | | 60000 |
| | Ընդամենը | 15 | 10 | | | 1358000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ | 45 | 40 | | | 7334000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԱՐԻ ԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 32-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 54-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29–ի N 2091-Ա որոշումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0, ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 54-Ն որոշման մեջ կատարել փոփոխությունները և լրացումները՝ համաձայն հավելվածի:.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հաշվի առնելով սուբվենցիոն ծրագրի շրջանակում Տաթև համայնքի Հալիձոր բնակավայրի ոռոգման ջրի ցանցի կառուցման աշխատանքները, Տաթև համայնքի կարիքների համար աղբամանների ձեռք բերման անհրաժեշտությունը համայնքի բյուջեում կապարել հետևյալ փոփոխությունները:

1.Եկամուտների՝

ա/ 6410 տողը՝ հողի իրացումից մուտքեր ավելացնել 8050.0 հազար դրամով:

բ/ 1261 տողը՝ Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ավելացնել 67625.3 հազար դրամով:
գ/ 1382 տողը՝Նվիր, ժառանգ. իրավ-ով ֆիզ. անձ. և կազմակերպ-ից համ-ին, վերջինիս ենթ. բյուջ. հիմն. տնօրին. անցած գույքի (հիմն. միջ. կամ ոչ նյութ. ակտ. չհանդ.) իրաց-ից և դրամ. միջ-ից կապ. ծախս. ֆին. համար համ. բյուջե սփ. մուտքեր՝ դրամ. ներքին աղբյուր-ից ավելացնել 19321.5 հազար դրամով:
2. Ծախսերի՝

ա/ 04,2,4 ծրագրի /ոռոգում/ 5112 հոդվածն ավելացնել 92996.8 հազար դրամով,որից՝ 90392.9 հազար դրամը համայնքի Հալիձոր բնակավայրի ոռոգման ջրի ցանցի կառուցման աշխատանքների համար, 2055.7 հազար դրամը որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական, 548.2 հազար դրամ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերման նպատակով: /Ծրագիրն իրականացվելու է սուբվենցիոն ծրագրի շրջանակում, որի ընդհանուր արժեքը կազմում է՝ 99211.4 հազար դրամ /:

բ/ 01,6,1 ծրագրի 5129 հոդվածն ավելացնել 2000.0 հազար դրամով՝ համայնքի կարիքների համար աղբամանների ձեռք բերման նպատակով:

**Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝** [signature] **Ա.Հովակիմյան**

### ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան՝ 94996.8 հազար դրամով:

**Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝** [signature] **Ա.Հովակիմյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Շինուհայր, (0284) 95530 tatev.syuniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 33-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ-9, դեմ-0, ձեռնպահ-0 արդյունքներով, ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետութան Սյունիքի մարզի Տաթև համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստերի օր և ժամ սահմանել 2023 թվականի սեպտեմբերի 18-ը, ժամը՝ 15:30:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ

ԳԵՐԱՍԻՄՅԱՆ ՄԱՐԱՏ

ԴԱՂՈՒՆՑ ՏԱԹԵՎԻԿ

ԼԱԼԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՍՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՎԼԱԴԻՄԻՐՅԱՆ ՆԱՌԱ

ՓԱՐՍՅԱՆ ԵԳՈՐ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԼԱԼԱՅԱՆ**